

Սիրելի մեծամորցիներ,

Մեծամոր քաղաքը ու ևս 30 բնակավայր, արդեն մեկ տարի է խոշորացվել է և տեղի են ունեցել ավագանու ու համայնքապետի ընտրություններ:

Ընտրություններում տանելով հաղթանակ՝ մենք ձևավորել ենք ավագանի, ընտրվել է համայնքապետ: Մեր թիմն արդեն մեկ տարի է իրականացնում է լայնածավալ աշխատանքներ, որոնք կոչված են մեր համայնքի բնակավայրերը համաչափորեն զարգացնելու ու դարձնելու ապրելու ու ստեղծագործ աշխատանք կատարելու համար հրաշալի վայր:

Մեծամորը պատմականորեն համարվել է գիտության, մշակույթի ու աշխարհին ներկայանալու բնակավայրերից մեկը: Մեր տարածքում են գտնվում հնադարյան պատմական հուշարձաններ, մշակույթի կոթողներ, որոնք մեզ ավանդել են մեր պապերն ու հայրերը, մեր ծնողները: Ու մենք աշխատում ենք այն մտայնությամբ, որ այս ամենը ոչ միայն կարողանանք պահպանել, այլ նաև զարգացնել ու մեր սերունդներին թողնել ծաղկուն ծննդավայր ու հայրենիք:

Այս մեկ տարվա ընթացքում համայնքապետարանի ու պետության աջակցությամբ իրականացվել են տարբեր ծավալների աշխատանքներ՝ սկսած միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատումից ու լուսավորության անցկացումից, մինչև գյուղական բնակավայրերում կրթական ու մշակութային օջախների վերականգնում ու ջեռուցում: Եթե վերլուծելու լինենք աշխատանքների որակն ու ոլորտները, պարզ կդառնա, որ այն ամեն ինչ իրականացվում է ապագայի Հայաստանի ու ապագայի Մեծամոր համայնքի համար է:

Մենք հասել ենք հաստատուն մի կետի, որը մեզ հնարավորություն կտա անցնել առաջ ու հասնել ավելի խոշոր արդյունքների ու հաջողությունների:

Եկող տարին մեզ համար պատասխանատու տարի է, մեր ընթացիկ աշխատանքներին զուգահեռ, պատրաստվում ենք դիմավորել բազաթիվ հյուրերի, ինչպես արտերկրից, այնպես էլ Հայաստանի տարբեր մարզերից: Ինչպես գիտեք, Մեծամոր քաղաքը դարձել է 2023թ երիտասարդական մայրաքաղաք, ու մենք բոլորս միահամուռ ուժերով պետք է պատշաճ կերպով դիմավորենք և մեր ավանդույթների համաձայն պատվենք մեր համայնքի այցելուներին:

Առաջիկա օրերի հանդես կգամ ավելի մանրամասն կատարված աշխատանքների մասին հաշվետու տեսաֆիլմով, որտեղ մանրամասն կներկայացնենք այն, ինչ կատարվել է ու պետք է իրականացվի հաջորդ տարիների ընթացքում:

Բոլորիս շնորհավորում եմ, այս օրվա կապակցությամբ, ու մաղթում եմ համբերություն ու ամրություն՝ հաղթահարելու բոլոր դժվարությունները՝ հանուն Մեծամորի ապագայի:

Հարգանքով՝ Մեծամորի համայնքապետ Վահրամ Խաչատրյան